ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2012- 25.08./281
25.08.2012 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

Հարգելի պարոն Հովսեփյան

Իր իրավունքների պաշտպանության համար 2012 թ. օգոստոսի 18-ին մեր կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի Լանջյան 24 հասցեի բնակիչ Նարեկ Արմենակի Ափինյանը:

Ըստ Նարեկ Ափինյանի, 2012թ. օգոստոսի 17-ին ոստիկանության աշխատակիցները իրեն իր աշխատանքի վայրից՝ երեկոյան ժամը 11:30-ին 12:00-ի սահմաններում բերման են ենթարկել Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժին, որտեղ նա ենթարկվել է հոգեբանական և ֆիզիկական բռնությունների, ճնշումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

2012 թ. օգոստոսի 18-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել է ՀՀ Հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն:

2012 թ. օգոստոսի 22-ից Ն. Ափինյանի նկատմամբ շարունակվում է կիրառվել հոգեբանական ճնշումները, որը նպատակ է հետապնդում Ն. Ափինյանին համոզել հրաժարվել իր բողոքից:

Դեռ ավելին 2012 թ. օգոստոսի 22-ին նման ճնշումների արդյունքում Ն. Ափինյանը ներկայանալով ՀՔԾ քննիչ Գ. Հովակիմյանի մոտ բացատրություն է տվել այն մասին, որ 2012 թ. օգոստոսի 18-ին ներկայացրած հանցագործության մասին հաղորդման մեջ նշված հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը:

2012 թ. օգոստոսի 23-ին Ն. Ափինյանը գիտակցելով նախօրեին կատարածի հետեվանքները, դիմում է ներկայացրել ՀՀ ՀՔԾ-ի պետ Ա. Միրզոյանին, այն մասին, որ իր կողմից տրված բացատրությունը եղել է ճնշումների ազդեցության տակ:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ Ն. Ափինյանին շարունակում են զանգահարել, հանդիպել և խնդրել, որպեսզի նա հրաժարվի 2012 թ. օգոստոսի 18-ին մեր կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ն. Ափինյանը իր նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական ճնշումների, բռնությունների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մեջ մեղադրում է ոստիկանության աշխատակիցներին, որոնք Վանաձոր քաղաքում ունեն մեծ հնարավորություններ և ռեսուրսներ, դիմում եմ Ձեզ՝ Ն. Ափինյանի անձնական անվտանգությունն ապահովելու պահանջով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am